# SARDARABAD

Número extraordinario dedicado al 20º aniversario de la Coronación de S.S. Vazken I y a la Bendición de los Santos Oleos en Echmiadzín.

Año II, Nº 25 Buenos Aires
Miércoles 20 de Octubre de 1976

# ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԷՋՄԻԱԾԻՆ

Սեպտեմբեր 24 - 25

Ժամը 10-14ը՝ Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է քոյր եկեղեցիների պատուիրակութիւններին:

Սեպտեմբեր 25ին, շաբաթ

Այցելութիւն Մայր տաճար, մայրավանքի շրջապատ և Վաղարշապատի պատմական եկեղեցիներ.

Ժամը 18ին՝ Մայր տաճարում կիրակամտի հանդիսաւոր ժամերգութիւն և հոգեւոր համերգ.

Սեպտեմբեր 26ին, կիրակի - Վարագայ Ս. Խաչ

Ժամը 10ին՝ Մայր տաճարում հանդիսաւոր Ս. Պատարագ և Սրբալոյս Միւռոնի օրհնութիւն.

Ժամը 14ին՝ ընդունելութիւն գահասրահում.

Ժամը 15ին՝ ճաշկերոյթ Վեհարանում, որին հրաւիրւում են քոյր եկեղեցիների պատուիրակութիւնները և հայ եկեղեցու եպիսկոպոսներն ու վարդապետները.

Սեպտեմբեր 27ին, երկուշաբթի

Ժամը 10ին՝ Վեհարանի հանդիսութեանց դահլիճում հանդիսաւոր նիստ՝ նուիրուած Վեհափառ Հայրապետի գահակալութեան քսանամեակին:

Ժամը 15ին՝ պաշտօնական ճաշկերոյթ Երեւանում «Արմենիա» հիւրանոցի ռեստորանում.

Երեկոյեան՝ գեղարուեստական ներկայացում Երեւանում:

Սեպտեմբերի 28ին, երեքշաբթի

Ժամը 10ին՝ Վեհափառ Հայրապետի գլխաւորութեամբ ծաղկեպսակի զետեղում և աղօթք Ծիծեռնակաբերդում, Հայ նահատակաց յուշարձանի առաջ.

Ժամը 11-12ը՝ քոյր եկեղեցիների հոգեւորական պետերի և ներկայացուցիչների այց Մատենադարան.

Ժամը 12-14ը՝ քոյր եկեղեցիների ներկայացուցիչների այց Ս. Գեղարդ, Գառնի և ապա ճաշ Ս. Գեղարդում.

Ժամը 14ին՝ «Արմենիա» հիւրանոցում ճաշ, Վեհափառ Հայրապետի և հոգեւոր պետերի.

Ժամը 20ին՝ ողջերթի ընթրիք Վեհարանի սեղանատանը՝ ի պատիւ քոյր եկեղեցիների պետերի և ներկայացուցիչների՝ մասնակցութեամբ Երուսաղէմի և Կ. Պոլսի Հայոց պատրիարքների և եպիսկոպոսների.

Սեպտեմբերի 29ին, չորեքշաբթի

Ժամը 11-13ը՝ թեմական առաջնորդների, հայ հոգեւորականների և պատգամաւորների այց Մատենադարան.



**Su Santidad Vazken I Catolicós Supremo de todos los armenios**

Սեպտեմբերի 30ին, հինգշաբթի

Ժամը 14ին՝ բացում Վեհարանի բակում յոբելեանական խաչքարի.

Ժամը 14,30ին՝ խմբական լուսանկարում մասնակցութեամբ բոլոր պատգամաւորների և հիւրերի.

Ժամը 17ին՝ Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ Վեհարանում գումարւում է եպիսկոպոսաց խորհրդակցական ժողով.

Հոկտեմբեր 1ին, ուրբաթ

Ժամը 9,30-13ը՝ թեմական առաջնորդների, հոգեւորականների և պատգամաւորների այց Սարդարապատի յուշարձան.

Հոկտեմբեր 2ին, շաբաթ

Ժամը 10-13ը՝ թեմական առաջնորդների, հոգեւորականների և պատգամաւորների այց Ս. Գեղարդ և Գառնի:

Հոկտեմբերի 3ին, կիրակի

Ժամը 10ին՝ Երեւանի վերակառուցուած Ս. Սարգիս եկեղեցու օծում, հանդիսաւոր Ս. Պատարագ և հայրապետական քարոզ: Մուտքը հրաւիրատոմսերով.

Հոկտեմբեր 4-5, երկուշաբթի և երեքշաբթի

Թեմական առաջնորդները, հիւր հոգեւորականներն ու պատգամաւորները հրաժեշտ են առնում Վեհափառ Հայրապետից, Մայր Աթոռից՝ իրենց մեկնումի առիթով:

## PROGRAMA DE ACTOS

Setiembre 24-25

10-14 hs. El Patriarca recibe en el Palacio del Catolicosato, a los representantes de las Iglesias hermanas.

Setiembre 25

Visita a la Catedral, al Seminario, y a los históricos templos de Vagharshabat.

18 hs. Concierto de música sacra.

Setiembre 26 - Domingo

10 hs. Oficio de la Santa Misa, en la Catedral y Bendición de los Santos Oleos.

Setiembre 27

En el salón de Actos del Catolicosato, Acto Académico dedicado a los 20 años de la Consagración Patriarcal.

19 hs. Representación artística en el Teatro de la Opera de Erevan.

Setiembre 28

10 hs. Ofrenda floral y responso ante el monumento recordatorio de 1.500.000 mártires armenios, en Dzidzernagapert, encabezado por S.S. VASKEN I.

11 hs. Visita de los representantes de las Iglesias hermanas, y representantes de las Diócesis de la Iglesia Apostólica Armenia al Madenatarán, al Convento de Keghart, y al Templo de Garní.

Setiembre 30

10 hs. Recepción a los Primados y Representantes civiles de la Iglesia Armenia.

14 hs. Inauguración de "Jachkar" recordatorio.

17 hs. Reunión Episcopal.

Octubre 1º

Visita al monumento recordatorio de la liberación armenia en Sardarabad.

Octubre 3

Consagración de la Iglesia San Sarkis, de Erevan, recientemente construída.

Octubre 4-5

Despedida de las delegaciones eclesiásticas y civiles.

# SANTOS OLEOS

## ՄԻՒՌՈՆՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Մեռոնօրհնութեան և Ծայրագոյն Պատրիարք Վազգէն Ա. Կաթողիկոսի Գահակալութեան քսանամեակի առթիւ Մայր Աթոռ են ժամանել հայ և քոյր եկեղեցիների հոգևոր պետեր, բարձրաստիճան ներկայացուցիչներ, բազում ուխտաւորներ և հիւրեր:

Սեպտեմբերի 25ին, շաբաթ օրը երեկոյեան Մայր տաճարում տեղի ունեցաւ կիրակամտի ժամերգութիւն և հոգևոր համերգ:

Սեպտեմբերի 26ին, Կիրակի օրը Մայր տաճարում հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցեց Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք Տէր Շնորհք Արք. Գալուստեանը:

Վեհափառ Հայրապետը և բոլոր հոգևոր պետերը եկեղեցական թափօրով առաջնորդուեցին Մայր տաճար՝ ներկայ լինելու Պատարագին: Պատարագի ընթացքում օրուայ հանդիսութիւնների հոգևոր, ազգային - հայրենասիրական նշանակութեան մասին քարոզեց Հայոց Հայրապետը:

Պատարագից յետոյ հոգևոր պետերը առաջնորդուեցին Մայր Տաճարի բակի արևմտեան մասում այս առթիւ պատրաստուած պատուանդանը:

Ժամը 12ին Վեհափառ Հայրապետը, զգեստաւորուած, ամպհովանու տակ, ուղեկցութեամբ տասներկու թեմակալ արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների, առաջնորդուեց Մայր տաճարի զանգակատան առաջ պատրաստուած բեմը՝ կատարելու սրբալոյս միւռոնի օրհնութիւնը:

Մայր տաճարի ամբողջ շրջափակը լցուած էր տասնեակ հազարաւոր ուխտաւորներով, հաւատացեալներով և հիւրերով:

Ժամը 12ին սկսուեց միւռոնօրհնութեան արարողութիւնը ըստ հայ եկեղեցւոյ դարաւոր կարգի և կանոնի:

Սրբալոյս միւռոնի օրհնութիւնը հաւատացեալ հայ ժողովրդի սրտին խօսող նուիրական արարողութիւններից մէկն է:

Այն արարողութեանը մասնակցում էին, Հայոց Հայրապետի կողքին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Տէր Եղիշէ Արք. Տէրտէրեանը, Տ. Շնորհք Պատրիարք Գալուստեանը և հայ եկեղեցւոյ բարձրաստիճան հոգևորականներ՝ խորանանչերն իր ձեռքին ունենալով հայ եկեղեցու նուիրական սրբութիւնները յատկանըշող մասունքներ:

Ըստ հայ եկեղեցւոյ աւանդական կարգ ու կանոնի, սրբալոյս միւռոնը պատրաստւում է քառասուն տարբեր տեսակի անուշահոտ ծաղիկների նեկտարից: Այն արարողութեան նուիրական պահին Հայոց Հայրապետը նոր եփուող միւռոնի կաթսայի մէջ, շարականներով, աղօթքով և օրհնութեամբ, յեղում է հին միւռոնից, և ապա Ս. Գրիգոր Լուսաւորչի պատմական Աջով խառնում է եօթ տարին մէկ արծաթէ մեծ կաթսայի մէջ եփուող միւռոնը, որն սկսում է եռալ ու պղպջալ:

Արարողութեան վերջում Վեհափառ Հայրապետը քարոզեց հայ ժողովրդի համար սրբալոյս միւռոնի ունեցած հոգևոր նշանակութեան մասին:

Այնուհետև հանդիսաւոր մեծ թափօրով Ամենայն Հայոց Հայրապետը, քոյր եկեղեցիների հոգևոր պետերը, ողջ հոգևորականութիւնը և թեմերի ներկայացուցիչները առաջնորդուեցին Վեհարանի դահլիճը, ուր Արևմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ և Ֆրանսայի Հայոց Առաջնորդ Տէր Սերովբէ Արք. Մանուկեանը, այս ուրախ առթով շնորհաւորեց Հայոց Հայրապետին:
...եար:

## El domingo 26 de setiembre se ofició la Santa Misa

El domingo 26 de Setiembre, ofició la Santa Misa el Patriarca Armenio de Constantinopla: Su Beatitud Monseñor Shnorhk Kaloustian, a cuyo término S.S. VAZKEN I, se dirigió en procesión al patio del sector oriental de Echmiadzín, bajo el palio de honor, acompañado por 12 Arzobispos y Obispos, Primados de todas las Diócesis de la Iglesia Armenia.

Decenas de miles de feligreses, peregrinos, invitados especiales, y creyentes de todas partes del mundo, presenciaron con unción y recogimiento, el solemne ritual de la Bendición de los Santos Oleos.

Acto seguido, S.S. VAZKEN I, pronunció una homilía exaltando el significado histórico-espiritual de estos actos, que se realizan cada siete años.

## Delegación Sudamericana ante el Santo Patriarca

El miércoles 29 de Setiembre, S.S. VAZKEN I° recibió a los representantes de Buenos Aires, encabezados por S.E. Monseñor Papken Abadián.

El Catolicós, bendijo a las colonias armenias y a los pueblos cristianos de Sudamérica. En esa oportunidad, los visitantes entregaron sus donaciones para el sustento del culto.

# SAN EC

## 20-ԱՄԵԱԿԻ ԳԱՀԱԿԱԼՈՒ



Սեպտեմբեր 27ին, երկուշաբթի օր ա-
ռաւօտեան ժամը 10ին Վեհարանի հանդիսու-
թեան դահլիճում տեղի ունեցաւ յոբելինական
հանդիսաւոր նիստ՝ նուիրուած Ամենայն Հա-
յոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի գահակալու-
թեան քսանամեակին:

Հանդիսութեան ներկայ էին կարդինալ
Վիլլեբրանդսը՝ ներկայացուցիչ Պօղոս Զ. Պա-
պին, Լոնտոնի եպիսկոպոս Ջերալդ Էլիսոնը՝
ներկայացուցիչ Քանթերպըրիի արքեպիսկո-
պոսին, Ռուսաց Պիմէն պատրիարքը, Վրաց
Դաւիթ Ե. պատրիարք - կաթողիկոսը, Երու-
սաղէմի Յոյն պատրիարքութեան ներկայա-
ցուցիչ Ժերմանոս Մամալիս միտրոպոլիտը
Երուսաղէմի Ֆրանցիսկեան միաբանութեան
ներկայացուցիչ Մաուրիլիօ Սակկին, Երուսա-
ղէմի սրբավայրերի ընդհանուր վերատեսուչ
Միւս Ռոկը և քոյր եկեղեցիների այլ ներկա-
յացուցիչներ:

Ներկայ էին նաև Երուսաղէմի և Կ.Պոլսի
Հայոց Տէր Եղիշէ և Տէր Շնորհք Պատրիարք-
ները, Հայ Եկեղեցւոյ բոլոր թեմակալ առաջ-
նորդները, թեմական խորհրդների ներկայա-
ցուցիչները, Մայր Աթոռի բարերարները և
բազում այլ հիւրեր:

Հայաստանի կառավարչութիւնը ներկա-
յացնում էր Հայ Եկեղեցւոյ գործերի խորհր-
դի նախագահ Սարգիս Գասպարեանը:

Իրենց ներկայութիւնը բերած էին նաև
Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամները, Ե-
րևանի մի շարք գիտական, մշակութային
հիմնարկութիւնների ղեկավարներ և հայ եր-
աւորականութեան ներկայացուցիչներ:

Հանդիսութիւնը բացուեց աղօթքով և
Հայաստանի հիմնի կատարումով:

Առաջինը ելոյթ ունեցաւ յոբելինական Տ.
կեդրոնական յանձնաժողովի նախագահ
Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանը:

Յաջորդաբար յոբելեար Կաթողիկոսի 20-
ամեայ գործունէութեանը նուիրուած
գոյն Հոգևոր Խորհրդի զեկուցագիր
ցեց Տ. Կոմիտաս Արք. Տէր Ստեփան

ADZIN

# ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ



Այս առթիւ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի ձից Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն ն նուիրուեց ոսկեձոյլ և ականակուռ Հայրապետական Արծիւ» շքանշանը՝ գրաբար ափգրուած մի գեղեցիկ ուղերձով, որ ըն-րցեց Շահէ Արք. Աճէմեանը:

Գերշ. Տ. Սերովբէ Արք. Մանուկեանը ներ-րի բոլոր ծափողջոյնների ներքոյ պատ-կանը պաշտօնապէս յանձնեց Վեհափառ յրապետին:

Հանդիսութեան առաջին մասը եզրափակ-ց ՀՍՍՀ Մինիստրների սովետին առըն-ր Հայ Եկեղեցւոյ Գործերի Խորհրդի Նախա-Սարգիս Գասպարեանի ողջոյնի խօսքով:

Այնուհետեւ Տէր Շահէ Արքեպիսկոպոսը պարտեց այս առթիւ ստացուած բազում նորհաւորական հեռագրերից մի քանիսը, այս ում մասնաւորապէս Հ. Բ. Ը. Միութեան եանս նախագահ Ալեքս Մանուկեանի շնորհա-րական ջերմ հեռագիրը:

Հանդիսութեանը երկրորդ բաժնում ող-ոյնի և շնորհաւորանքի խօսքերով հանդէս ն՝ Տ. Շնորհք Պատրիարք Գալուստեանը՝ ն Հայ Եկեղեցւոյ նուիրապետական թոռների և բոլոր թեմերի, կարդինալ Ժան իլլբրանդսը՝ յանուն Պօղոս Զ. Պապի և ոմէական Կաթոլիկ Եկեղեցւոյ և գրեթէ բո-ր քոյր եկեղեցիներու ներկայացուցիչները:

Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան ձե-ագրաց Մատենադարանի տնօրէնութեան և կան խորհրդի անունից ողջոյնի խօսք ռաց նոյն հաստատութեան տնօրէն ակադե-իկոս Լեւոն Խաչիկեան:

Սփիւռքահայութեան հետ մշակութային պի Կոմիտէութեան նախագահ Վարդգէս Համազասպեանը, յանուն կոմիտէի, նոյնպէս ողջունեց և շնորհաւորեց Հայոց Հայրապե-տին:

Հանդիսութեան աւարտին շնորհակալու-թեան և երախտագիտութեան ջերմ խօսքով հանդէս եկաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

* * *



# X X ANIVERSARIO

## FESTEJOS CONMEMORATIVOS

### Invitados Especiales

Al Acto Académico en el transcurso del cual, hicieron uso de la palabra:

- Representante del Papa Paulo VI: el Cardenal Jean Wilibrands.
- Representante del Arzobispo de Canterbury: Dean Gerald Ellison.
- Representante del Patriarca Católico de Jerusalem: Archimandrita Maurilio Sakki.
- Catolicós de la Iglesia Malabar de la India: Monseñor Basilios.
- Representante del Patriarca Griego de Jerusalem: Metropolitano Germanos Mamalis.
- Patriarca Ortodoxo Ruso: Monseñor Bimen.
- Patriarca de la Iglesia Ortodoxa Georgiana: Monseñor David V.

En nombre del Santo Sinodo de la Iglesia Apostólica Armenia, le fue conferido a Su Santidad VAZKEN I, una distinción consistente en una medalla de oro y diamante, simbolizando un águila patriarcal.

Se lo designó como "AMANTE DE SU PUEBLO Y CONSTRUCTOR".

— • —

Se leyeron adhesiones de todas partes del mundo, en especial la de Alex Manoogian —Presidente Vitalicio de la Unión General Armenia de Beneficencia—, del compositor Aram Jachadurian, de la Fundación Calust Gulbenkian.

En la parte artística, se destacaron las actuaciones patrióticas de la poetisa Silva Gabudiguian, del escritor Kevork Emin.

— • —

Momentos de honda emoción se vivieron en Dzidzernagapert, cuando más de mil invitados extranjeros y representantes, rindieron homenaje a las víctimas de la barbarie otomana.

En esa ocasión, más de 40 eclesiásticos, rezaron Hokvots en 5 idiomas, y dirigidos por el Arzobispo Gomidas, entonaron el Padrenuestro y "Verin Ierusaghem".

## ORDEN DE SAN GREGORIO EL ILUMINADOR en PRIMER GRADO



Profesor Parunag Tomassian

En sendos actos, Su Santidad VAZKEN I, confirmó la Orden de San Gregorio el Iluminador en Primer Grado, de oro y diamante al benefactor sudamericano Missak Kouyoumdjian y al Profesor Parunak Tomassian —Presidente de la Asociación Cultural Tekeyan y de la Organización Demócrata Liberal Armenia (Ramgavar-Azadagán).



Benefactor Missak Kouyoumdjian

Ժամը 16ին «Արմենիա» հիւրանոցի ըն-դարձակ ռէստորանում յոբելինական կեդրո-նական Յանձնաժողովը, ի պատիւ Հայոց Հայ-րապետի և բոլոր հիւրերի կազմակերպել էր պաշտօնական ճաշկերոյթ, որին ներկայ եղան 270 հոգի:

Ընդունելութեան ժամանակ Հայոց Հայ-րապետին ողջունեցին և շնորհաւորեցին հո-գեւորական և աշխարհական մի շարք պաշտօ-նական անձնաւորութիւններ:

* * *

Ջերմ հնչեցին նաև հայրենի ծանօթ մը-տաւորականներից բանաստեղծուհի Սիլվա Կա-պուտիկեանի, բանաստեղծ Գէորգ Էմինի և ճարտարապետ փրոֆ. Վարազդատ Յարու-թիւնեանի հայրենաշունչ ելոյթներն ու շնոր-հաւորական խօսքերը:

* * *

Սեպտեմբեր 28ին երեքշաբթի օրը առա-ւօտեան ժամը ութին, Վեհափառ Հայրապետի գլխաւորութեամբ, բոլոր հոգեւոր պետերը, պատգամաւորներն ու հիւրերը այցելեցին Ծի-ծեռնակաբերդի Հայ Նահատակաց Յուշարձա-նը: Եւ յաւերժական կրակի շուրջ բոլորուած՝ հայ և քոյր եկեղեցիների հոգեւոր պետերը, հայ հոգեւորականութիւնը և բոլոր պատգա-մաւորները, միաբերան աղօթեցին Հայ Նա-հատակների հոգիների խաղաղութեան և հանգստեան համար:

* * *

Սեպտեմբեր 29ին Վեհափառ Հայրապետը ընդունեց Հարաւ. Ամերիկայի պատգամաւոր-ները, գլխաւորութեամբ՝ Տ. Բարգէն Արքեպ. Աբատեանի, բաշխելով օրհնութիւններ բոլոր հաւատացեալ Հարաւ. Ամերիկայի հայութեան:

* * *

Սեպտեմբեր 30ին Ամենայն Հայոց Կաթո-ղիկոսը ընծայեց Ս. Գրիգոր Լուսաւորչի Ա. կարգի շքանշաններ ազգային բարերար Պրն. Միսաք Գույումճեանին և Թէքէեան Մշակու-թային Միութեան հիմնադիրներու մարմնի ա-տենապետ փրոֆ. Բարունակ Թովմասեանին:

